

## Գ.

Գեղապետին տղան, քիչ մը անհանգիստ սա ելոյթէն, բաժնելով իմ ալ վախերս, կը զատուի ինձմէ:

Կը քալենք երեքով, գեղացիները ձգելով մեծ հոգի մէջ: Աքլորամարտը չէր առած իրենց սպառած գնացքը: Կանխահոգ յանձնարարութիւն մը լսելու, ծածկելու սա հիւրերուն ներկայութիւնը կը նշանակէր անուղղակի գործ ճարել շատախօսներուն, փսփսուքին ու արթնցնել անպայման չուշացող հարկահաւաքին ուշադրութիւնը: Գաղտնիքը մեր ժողովուրդին մէջ չունի զգայարանք: Ուղիղ անբաններ ենք, եղանք, էինք դարերով, այդ գետնին վրայ: Ու դիտած եմ, որ զայն, գաղտնիքը, չենք կրրնար կրել: Ամէնէն շատ պիտի տառապին անկէ անոնք, որ ուրիշ առիթով դժուար կը յօժարին բերան բանալ:

Մէկ կողմէն կը հեռանամ սրճարանէն, միւս կողմէն՝ կ'ամբողջացնեմ մտածումներս: Յստակ է ծրագիրս: Ամէն գնով հարկահաւաքին ժամանումէն առաջ հիւրերը հանել գեղէն դուրս: Նոյն ատեն իրարու ետեւէ կը ներկայանան մտքիս հեքիաթներ, այդ մարդերը, աճպարար, կօշիկ նորոգող, աշուղի աշկերտներ տիտղոսելու այն պարագային, երբ ինծի անկարելի դառնայ զանոնք լեռ հասցնել մութը չկոխած: Ջարդերէն առաջ թուրքերը